ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/53

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի 15.12.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 15.12.2017թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԿԱ ոստիկանությունը, 01.12.2017թ. հայտարարել է ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՇՁԲ-ԱՆՁՆ/2018-ԱՎՎ ծածկագրով անձնագրերի տպագրման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի հայտարարություն և հրավեր (այսուհետ՝ նաև Հրավեր): Հրավերի 2.5 կետով սահմանված «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի շրջանակներում որպես նմանատիպ աշխատանք է դիտարկվել անձնագրերի տպագրման աշխատանքները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հայտնում եմ, որ Հրավերով սահմանված նմանատիպ աշխատանքների շրջանակը խիստ սահմանափակ է, կրում է խտրական բնույթ և խոչընդոտում է մասնակիցների շրջանակի ընդլայնման ու նրանց միջև մրցակցությանը»:

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է չկայացած հայտարարել ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՇՁԲ-ԱՆՁՆ/2018-ԱՎՎ ծածկագրով անձնագրերի տպագրման աշխատանքների գնման ընթացակարգը:

Խորհրդի նիստերին մասնակցում էին «ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ Արմեն Աղինյանը և Նաիրի Դանիելյանը:

2. <u>ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, Խորհուրդը դիմել է ՀՀ ԿԱ ոստիկանությանը՝ առաջարկելով նույն հոդվածով սահմանված ժամկետում Խորհրդին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Խորհրդի նիստերին մասնակցում էր ՀՀ ԿԱ ոստիկանության լիազորված ներկայացուցիչ Գուրգեն Մանուկյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2017/53 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի 15.12.2017թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՇՁԲ-ԱՆՁՆ/2018-ԱՎՎ ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), Պատվիրատուի կարծիքը և դիրքորոշումը.

ՀՀ ԿԱ ոստիկանությունը «անձնագրերի տպագրման աշխատանքների» ձեռքբերման նպատակով հայտարարել է ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՇՁԲ-ԱՆՁՆ/2018-ԱՎՎ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

Գնահատող հանձնաժողովի 2017թ. դեկտեմբերի 1-ի որոշմամբ հաստատված «ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՇՁԲ-ԱՆՁՆ/2018-ԱՎՎ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2.5 կետով սահմանվել է, որ նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում անձնագրերի տպագրման աշխատանքների կատարված լինելը:

Բողոքի քննության նպատակով 21.12.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ, բողոք բերող անձը Խորհրդին հայտնեց, որ Հրավերով սահմանված նախկինում կատարված նմանատիպ աշխատանքների սահմանումը խիստ սահմանափակում է մրցակցությունը, կրում է խտրական բնույթ և խոչընդոտում է հնարավոր մասնակիցների շրջանակի ընդլայնմանը: Բողոք բերող անձը հավելեց նաև, որ նախկին տարիներում նույն մրցույթների հրավերներում որպես նախկինում կատարված նմանատիպ աշխատանք սահմանվել է «հատուկ պաշտպանվող պետական նշանակության փաստաթղթերի տպագրության» աշխատանքների կատարումը, իսկ տեխնիկական բնութագրում միայն նշվել են կոնկրետ ձեռքբերման աշխատանքների տեսակները, օրինակ՝ անձնագիր, բլանկ, էսքիզ և այլն:

Պատվիրատուի ներկայացուցիչն ընդունեց այն փաստը, որ Հրավերով սահմանված նախկինում կատարված նմանատիպ աշխատանքների սահմանումը մատնանշում է կոնկրետ ձեռքբերվող աշխատանքների տեսակին, որը կարող է բացառել այլ նմանատիպ աշխատանքի կատարման փորձ ունեցող հնարավոր մասնակցի մասնակցությունը Ընթացակարգին: Խորհրդի այն հարցին, թե որպես Հրավերով սահմանված նմանատիպ աշխատանքներ արդյոք ընդունելի չեին կարող լինել հատուկ պաշտպանվածության այլ փաստթղթերի տպագրական աշխատանքների կատարման գործարքները, Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց, որ նման տարբերակը Պատվիրատուի կողմից ընդունելի է, սակայն տեխնիկական վրիպակի պատճառով Հրավերում տեղ է գտել նմանատիպ աշխատանքների նման սահմանում:

Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց նաև, որ Հանձնաժողովը պատրաստակամ է եղել Հրավերում կատարել համապատասխան փոփոխություններ, սակայն նշված փոփոխությունների կատարման համար գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետը վերջինիս թույլ չի տվել իրականացնել նշված փոփոխությունները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի

- 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.
- 2-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

ՀՀ կառավարության 04.05.2011 թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

Խորհուրդն արձանագրում է, որ «ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՇՁԲ-ԱՆՁՆ/2018-ԱՎՎ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2.5 կետի համաձայն՝ նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում անձնագրերի տպագրման աշխատանքների կատարված լինելը:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ հաստատելով «ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՇՁԲ-ԱՆՁՆ/2018-ԱՎՎ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ համարվող աշխատանքները՝ խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջները, քանի որ տվյալ սահմանումը խտրական է և անհիմն կերպով բարդացնում է հնարավոր մասնակիցների մասնակցությունը գնման գործընթացին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի 15.12.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել:
2. Պարտավորեցնել Ընթացակարգի Հանձնաժողովին՝ ընդունել «ՀՀ ԿԱ Ո ՀԲՄԱՇՁԲ-ԱՆՁՆ/2018-ԱՎՎ» ծածկագրով գնանշման հարցման միջոցով տպագրական աշխատանքների գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու համապատասխան որոշում:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ